

CONFESSION AND ABSOLUTION

Priest: In the name of the Father and of the Son and of the Holy Spirit, Amen.

People: I have sinned against the all-holy Trinity, the Father, the Son and the Holy Spirit. I have sinned against God. I confess before God, and before the Holy Mother of God, and before all the saints and before you, holy father, all the sins which I have committed; for I have sinned in thought, word and deed, willingly and unwillingly. I have sinned against God.

Priest: May God forgive you.

People: I have sinned by the seven transgressions of the deadly sins and all their forms, namely by pride, envy, anger, laziness, covetousness, gluttony and lust. I have sinned against God.

Priest: May God forgive you.

People: I have also sinned against all the commandments of God, both positive and prohibitive; for I have neither performed the positive commands, nor abstained from those things that are prohibited. I accepted the laws, but was slothful in keeping them. I was called to the profession of Christianity but was found unworthy of it by my deeds. While knowing the evil, I willingly gave way to it, and I purposely kept away from good deeds. Woe to me. Woe to me. Woe to me. Which of my misdeeds shall I recount? Which shall I confess? For my sins are innumerable. I have sinned against God.

Priest: May God forgive you.

People: Reverend Father, I have you as reconciler and intercessor with the only-begotten Son of God, that by the authority given to you, you will release me of the bond of my sins, I ask you.

Priest: Lord have mercy. Lord have mercy. Lord have mercy. May God who loves mankind have mercy on you and forgive all of your sins, both those which you have confessed, as well as those which you have forgotten. Therefore, with the priestly authority committed to me and by the Lord's command that "Whatever you forgive on earth shall be forgiven in heaven," by His very word, I absolve you of all participation in sin, in thought, in word and in deed, in the name of the Father and of the Son and of the Holy Spirit. And I reinstate you in the sacraments of the Holy Church, that whatever you may do may be accounted to you for good and for the glory of the life to come. Amen.

Խոստովանանք եւ Արձակում

Քահանայ.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Ժողովուրդ.

Մեղանչեցի Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը Որդիին եւ Սուրբ Հոգիին դէմ: Մեղաւոր եմ Աստուծոյ առջեւ: Կը խոստովանիմ Աստուծոյ, Սուրբ Աստուածածնին, եւ քեզի, Հայր Սուրբ, բոլոր մեղքերս գորս գործած եմ: Վասնզի մեղանչեցի խորհուրդով, խօսքով եւ գործով, կամովին եւ ակամայ, մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քահանայ.

Աստուած թողութիւն շնորհէ:

Ժողովուրդ.

Այլեւ մեղանչեցի եօթը մահացու մեղքերով. հպարտութեամբ, նախանձով, բարկութեամբ, ծուլութեամբ, ազահութեամբ, որկրամոլութեամբ եւ բղջախոհութեամբ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քահանայ.

Աստուած թողութիւն շնորհէ:

Ժողովուրդ.

Նաեւ մեղանչեցի Աստուծոյ բոլոր պատուիրաններուն՝ յանձնարարուածներուն եւ արգիլուածներուն դէմ, քանի որ ոչ յանձնարարուածները կատարեցի եւ ոչ ալ արգիլուածներէն հեռու կեցայ: Օրէնքները ընդունեցայ, բայց անոնց նկատմամբ անհոգ գտնուեցայ. քրիստոնէական կեանքին հրաւիրուեցայ, բայց գործերովս անարժան գտնուեցայ: Չարը գիտնալով՝ կամովին խտորեցայ եւ բարի գործերէն հեռացայ. վայ ինձի, վայ ինձի, վայ ինձի: Ո՞ր մէկը ըսեմ կամ ո՞ր մէկը խոստովանիմ, քանի որ անթիւ եմ իմ յանցանքներս. մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քահանայ.

Աստուած թողութիւն շնորհէ:

Ժողովուրդ.

Հայր սուրբ, զքեզ կը նկատեմ հաշտութեան միջնորդ եւ Աստուծոյ Միածին Որդիին մօտ բարեխօսող, որպէսզի այն իշխանութեամբ որ տրուած է քեզի արձակես զիս իմ մեղքերուս կապանքէն, կ'աղաչեմ քեզի:

Քահանայ.

Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ. Տէր, ողորմէ:

Թող մարդասէրն Աստուած ինք ողորմի ձեզի եւ թողութիւն շնորհէ ձեր բոլոր յանցանքներուն՝ խոստովանածներուն եւ մոռցածներուն: Իսկ եւ քահանայական իշխանութեան կարգովս, եւ աստուածային հրամանով՝ թէ «Ինչ որ կ'արձակէք երկրի վրայ, թող արձակուի երկինքի մէջ», նոյն խօսքով կ'արձակեմ զձեզ մեղքերուն մասնակցութենէն, խորհուրդներէն, խօսքերէն եւ գործերէն, Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով, եւ դարձեալ կը հաստատեմ ձեզ Սուրբ Եկեղեցւոյ խորհուրդներուն մէջ, որպէսզի ինչ լաւ բաներ որ ընէք՝ անոնք ըլլան ձեզի համար բարի գործեր եւ հանդերձեալ կեանքի համար փառք. ամէն: